ՄԱՀԱՐՁԱՆԸ՝ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՑՈՒՑԻՉ (ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶ – ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐ)

FUNERARY SCULPTURE AS AN INDICATOR OF ARCHAEOLOGICAL CULTURE (MIDDLE BRONZE – IRON AGES)

НАДГРОБНОЕ ИЗВАЯНИЕ КАК УКАЗАТЕЛЬ АРХЕОЛОГИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ЭПОХИ СРЕДНЕЙ БРОНЗЫ – ЖЕЛЕЗА)

Գարեգին Թումանյան
Garegin Tumanyan
Гарегин Туманян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

garegin.tumanyan@iae.am

Ներկայացվել է՝ 04.08.2025; գրախոսվել է՝ 16.11.2025; ընդունվել է՝ 14.04.2026
Received: 04.08.2025; Revised: 16.11.2025; Accepted: 14.04.2026
Представлено: 04.08.2025; рецензировано: 16.11.2025; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence–ի պայմաններով
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-202

Ամփոփում – Հուշակոթողների ուսումնասիրությունը դամբանային հնագիտության կարևոր խնդիրներից է: Առանց թաղման կառույցների հետազոտության՝ մեր պատկերացումները թաղման ծեսերի վերաբերյալ թերի կլինեին: Մահարձանները դամբարանի արտաքին կառույցների մասն են կազմում: Դամբանասրահը սովորաբար համարվում է անդրաշխարհի, դամբանաթումբը՝ երկրի, իսկ հուշակոթողը՝ երկնքի խորհրդանիշը: Այնկողմնային աշխարհից դեպի երկինք անցումը, ըստ երևույթին, կատարվում էր հուշակոթողի միջոցով: Դամբանադաշտերում ուղղաձիգ կանգնեցված կոթողների առջև՝ ի հիշատակ ննջեցյալների, կատարվում էին զոհաբերություններ ու ծիսապաշտամունքային այլ արարողություններ, որոնք, ընդհանուր առմամբ, միտված էին ննջեցյալների վերածննդին նպաստելուն: Հուշակոթողները գնահատելի սկզբնաղբյուրներ են հատկապես այլ տարածաշրջաններ ներթափանցած քոչվորական մշակույթներն ուսումնասիրելիս: Օրինակ, մարդ պատկերող որոշակի տիպի մահարձանի առկայությունը դամբանային համալիրի կազմում կարող է հուշել տվյալ դամբարանի առնչված լինելը սկյութական թաղման ծեսին: Քարակերտ մարդակերպ կոթողները, որպես հնագիտական սկզբնաղբյուր, որոշակի մշակույթի պատկանող հնագիտական համալիրների համար կարող են «անձնագրի» դեր կատարել, քանի որ այդ մեծ ու ծանր արձանները հեռու տեղափոխելը շատ դժվար է: Հոդվածում քննարկվում են միջին բրոնզ – երկաթեդարյան տարբեր մշակույթներին բնորոշ մահարձանների չափերը, ձևերը, հատվածաբաժանումները, մշակման

տեխնիկան, պատկերագրությունը: Մահարձանների տիպաբանական վերլուծությամբ փորձ է արվում պարզել դրանց պատկանելությունը հնագիտական այս կամ այն մշակույթին:

Abstract – Exploration of memorial stelae is an important issue in burial archaeology. Our understanding of funeral rites would be incomplete if lacking data on funerary constructions. Funerary sculptures are a part of external constructions of a sepulchral complex. Burial chamber is usually considered as a symbol of the underworld, burial mound – as a symbol of the earth, and funerary sculpture – as a symbol of the heaven. The transition from the other world to heaven was apparently carried out through a funerary sculpture. In ancient burial grounds, sacrifices and other ritual and cult ceremonies were performed in front of vertically installed funerary sculptures. Generally, all these ceremonies were aimed at contributing to the revival of the deceased. Memorial stelae are valuable sources, especially when studying nomadic cultures penetrated into other regions. For example, the presence in the sepulchral complex of a certain type of funerary sculpture depicting a man may indicate the relation of that tomb to Scythian funerary rites. As archaeological sources, stone anthropomorphous stelae can serve as "passports" for archaeological complexes belonging to a certain culture, as these large and heavy statues are very difficult to convey far distances. This paper discusses the sizes, shapes, segmentations, processing techniques, and iconography of funerary sculptures typical for different Bronze–Iron Age cultures. Through typological analysis of funerary sculptures, an attempt is made to identify their belonging to a specific archaeological culture.

Аннотация – Изучение мемориальных стел является одной из важных задач археологии погребений. Без исследования погребальных сооружений наши представления о погребальных обрядах были бы неполными. Надгробные изваяния являются частью внешних сооружений погребального комплекса. Погребальная камера обычно считается символом потустороннего мира, могильный холм – символом земли, а мемориальная стела – символом неба. Переход из потустороннего мира на небо, по–видимому, осуществлялся посредством мемориальной стелы. На древних могильниках перед вертикально установленными мемориальными стелами совершались жертвоприношения и другие ритуально–культовые церемонии, которые, как правило, были направлены на содействие возрождению усопших. Мемориальные стелы являются ценным источником, особенно при изучении кочевнических культур, проникших в другие регионы. Например, наличие в составе погребального комплекса определенного типа надгробного изваяния, изображающего человека, может указывать на связь данного погребения со скифским погребальным обрядом. Каменные антропоморфные стелы, как археологические источники, могут выполнять роль «паспорта» для археологических комплексов, принадлежащих к определенной культуре, поскольку эти большие и тяжелые статуи очень сложно перемещать. В статье обсуждаются размеры, формы, сегментации, техника обработки, иконография, характерные для надгробных памятников различных культур эпох бронзы и железа. С помощью типологического анализа надгробных изваяний делается попытка определить их принадлежность к той или иной археологической культуре.

Հիմնաբառեր – Հայաստան, մշակույթ, դամբարան, հուշակոթող, կուռք:
Keywords – Armenia, culture, sepulchre, stele, idol.
Ключевые слова – Армения, культура, погребение, стела, идол.

Ներածություն

Դամբանային համալիրի կարևոր տարրերից մեկը թաղման հուշակոթողն է, իսկ դամբանային կառույցների հետազոտությունը թաղման ծեսերի ուսումնասիրության հիմնական խնդիրներից է: Այն արժեքավորելու համար բավական է նկատել, որ հնագիտական մի շարք մշակույթներ իրենց անվանումն ստացել են ըստ թաղման կառույցների տեսակների: Քանի որ դամբարանի կառուցվածքը պայմանավորված է հուղարկավորման ծեսով, ապա այն թույլ է տալիս եզրահանգումներ կատարել նաև մշակութային փոփոխությունների վերաբերյալ: Դամբանային կառույցները, մասնավորապես հուշակոթողները, կարևոր ու անփոխարինելի սկզբնաղբյուրներ են բրոնզ–երկաթեդարյան հնագիտական մշակույթները, այդ թվում՝ այլ տարածաշրջաններ ներթափանցած քոչվորական մշակույթներն ուսումնասիրելիս (Tumanyan 2010, 189; Tumanyan 2017, 196, 201): Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածի ուշբրոնզեդարյան թաղման ծեսը քննարկելիս դամբարանների կառուցվածքում առանձնացրել ենք երկու ենթատարրեր՝ արտաքին ու ներքին կառույցները: Դամբանաբլուրների կամ դամբանաթմբերի վրա կանգնեցված հուշակոթողները, բնականաբար, ընդգրկվել են արտաքին կառույցների կազմում (Թումանյան 2003, 166): Քարե կոթողների կամ մահարձանների առկայությունը բնորոշ է Հայկական լեռնաշխարհի միջին բրոնզ–երկաթեդարյան դարաշրջանների թաղման համալիրներին ընդհանրապես:

Քննարկում և արդյունքներ

Հայաստանի մի շարք դամբանաբլուրների կամ դամբանաթմբերի գագաթին տեղադրվել են բազալտե կամ տուֆե անմշակ կամ ֆալաձև կենտրոնական ցից քարեր կամ էլ քարերի ուղղաձիգ շարվածքներ, որոնք, չլինելով մահարձան/կոթող, կարող են ունենալ համանման գործառույթ՝ հանդիսանալով որոշակի ուղենիշ: Նման իրողություն է փաստագրվել Աշտարակի Խոջաբաղեր 2 հուշարձանախմբի դամբանաբլրային մշակույթին պատկանող N 1 դամբանաթմբում, որն ունեցել է 8,5 մ առավելագույն տրամագիծ և 0,6 մ բարձրություն (Թումանյան 2008, 187, 189, նկ. 1): Թմբի գագաթին՝ դրա երկրաչափական կենտրոնում, դրված է եղել 0,5 մ բարձրությամբ բազալտե անմշակ որձաքար (նկ. 1): Ենթադրվում է, որ տուֆե կարմիր կոթող է զետեղված եղել Ներքին նավերի 20 մ տրամագծով և 0,5 մ առավելագույն բարձրությամբ N 1 դամբանաբլրի վրա (Սիմոնյան 2021, 15–16, նկ. 7): Քարաշամբի միջինբրոնզեդարյան նշանավոր դամբանաբլրի գագաթին կանգնեցված է եղել 0,21 մ տրամագծով ու 0,35 մ բարձրությամբ բազալտե ֆալաձև կոթող (Оганесян 1993, 27): Վանաձորում 1948 թ. պատահաբար բացված և թռեղք–վանաձորյան մշակույթին բնորոշ դամբանաբլրի արտաքին նշաններն անհայտ են (Դեվեջյան 2006, 251): Սակայն, ըստ Բ.Բ. Պիոտրովսկու բանավոր հայտնած կարծիքի՝ դամբանասրահում ի հայտ եկած կարմիր տուֆից կերտված կոթողը, հավանաբար, սկզբնապես տեղադրված է եղել դամբանաբլրի գագաթին (Սիմոնյան 2021, 16): Արուճի/Շամիրամ

2 դամբարանադաշտում N 7 դամբանաթմբի ծածկասալին կից 0,3 մ բարձրությամբ ցից քար էր կանգնեցված: Նույն երևույթն է դիտվում Վերին նավեր դամբարանադաշտում: Այստեղ պեղված՝ սևան–արցախյան մշակույթը ներկայացնող N 13 դամբանաբլրի մեծ տրամագիծը 14 մ է, փոքր տրամագիծը՝ 11 մ, բարձրությունը՝ 1,20 մ: Դամբանաբլրի կենտրոնական հատվածում ի հայտ է եկել կարմիր տուֆից կերտված կոթող՝ իր մշակումով ֆալոս հիշեցնող (Սիմոնյան 2006, 78): Արտակարգ հետաքրքիր իրողություն է փաստագրվել Լոռի բերդի N 79 դամբանային համալիրի պեղումներով: Թռեղքյան այս դամբանաբլրի թաղման սրահի ծածկի կենտրոնական հատվածի վրա կառուցված է եղել հիմքում ուղղանկյուն (2,85x2,35 մ չափերով) բրգաձև աշտարակ, որի բարձրությունը (զրահի մակերևույթից հաշված) եղել է առնվազն 2,5 մ (Դեվեջյան 2006, 61–62, նկ. 45): Եթե ճիշտ է այն ենթադրությունը, որ Լճաշենի 3,7 մ երկարությամբ վիշապաքարն առնչվում է նրա տակ հայտնաբերված միջինբրոնզեդարյան թաղմանը (Խանզադյան 2005, 87–90, նկ. 1, 2), ապա այն սկզբնապես կարող էր կանգնեցված լինել Լճաշենի N 6 դամբանաբլրի վրա՝ որպես հուշակոթող (Թումանյան 2015, 107):

Ուշ բրոնզի դարաշրջանում շարունակվում է դամբանաբլրի գագաթին հուշակոթող տեղադրելու ավանդությունը: Քանագեղի քարահողային լիցքով կառուցված ու որձաքարի բեկորներով օղակված N 1 դամբանաթումբն ունեցել է 12 մ տրամագիծ և մոտավորապես 1 մ բարձրություն, որի գագաթին գտնվել է ստորին մակարդակում միացված, իսկ վերևում՝ իրարից հեռացող երեք սալերով կառուցված «զետեղարան»: Ենթադրվում է, որ այն կարող էր ուղղաձիգ կանգնեցված հուշակոթողի բուն ծառայել (Արեշյան 1981, 3): Գոգարանի ուշբրոնզեդարյան N 2 դամբանաթումբը ձևավորվել է 11 մ տրամագծով ու 1 մ բարձրությամբ հողային լիցքով, որը շրջագծվել է եզրաքարերով: Դամբանաթմբի տակ բացված երկու խցերից մեկի սալածածկի կենտրոնում գտնվել է ֆալոսատիպ կոթող (Բաղրամյան 1988, 12): Ծակոտկեն բազալտից կերտված կուռք է հայտնաբերվել Ապարանի ջրամբարի ափի ուշբրոնզեդարյան N 11 դամբարանում: Այն որպես շինաքար՝ գլխիվայր ու հակառակ երեսով, օգտագործվել է դամբանախցի պատի շարվածքում (Մուրադյան 1988, 55): Թեև Հայաստանի ուշբրոնզեդարյան հուշակոթողների ճշգրիտ չափերն առայժմ մեզ հայտնի չեն, սխալ չի լինի ենթադրել, որ դրանք ընդհանուր առմամբ առավել մեծ բարձրություն են ունեցել և ավելի լավ են մշակված եղել, քան իրենց միջինբրոնզեդարյան նախօրինակները:

Ենթադրվում է, որ Կարմիր բլուրից, Կարմիր բերդից ու Այգեստանից գտնված վաղերկաթեդարյան կուռքերն սկզբնապես դրված են եղել դամբարանների վրա (Есаян 1976, 230): Այգեշատի դամբարանադաշտում հայտնաբերված վաղերկաթեդարյան սյուն–կուռքերը կերտված են կարմիր տուֆից (Ավետիսյան, Ավետիսյան 2006, 18–22, 380, նկ. 3բ): Բանանց գյուղի մոտ Է. Ռյոսլերի պեղած երկաթեդարյան մի շարք դամբարանների վրա կանգնեցված են եղել սեպաձև մեծ քարեր, որոնցից մեկն ունեցել է 1,55 մ բարձրություն (Спицын 1904, 37–41):

Նկ. 1. Աշտարակի Խոջաբաղեր 2 հուշարձանախմբի N 1 դամբանաթումբը (լուսանկարը՝ հեղինակի)

Նկ. 2. Շամիրամի դամբարանադաշտի քարե հուշակոթողներից մեկը (տե՛ս Լալայան 1931, 64, նկ. 15)



Նկ. 3. Էջմիածնի Մայր տաճարի արևելյան աբսիդում՝ բեմի տակ հայտնաբերված ուրարտական բազալտե հուշակոթողը (տե՛ս Առաքելյան, Մազմանյան 1964, նկ. 38)

Նկ. 4. Լոռի բերդի N 63 դամբարանի թաղման 2-րդ սրահում հայտնաբերված մահարձանը (տե՛ս Devedjyan 2009, 197, tab. V)

Շամիրամի դամբարանադաշտի վաղերկաթեդարյան կրոմլեխների հյուսիսային կողմի եզրաքարերին դրսից կցված են եղել քառանկյուն քարարկղներ: Որոշ կրոմլեխներին արտաքինից կցված այս կառույցների մոտ կամ կրոմլեխի ներսում՝ դամբանաթմբի վրա (Լալայան 1928, 90, նկ. 5; Լալայան 1931, 64, նկ. 15) ուղղաձիգ տեղադրվել են մինչև 3 մ բարձրությամբ քարե հուշակոթողներ (նկ. 2): Այդ կոթողների շնորհիվ հիշյալ դամբարանադաշտը նախկինում «քարե անտառի» տեսք է ունեցել: Շամիրամի դամբարանադաշտում հայտնաբերվել են նաև ֆալոսատիպ տուֆե կերտվածքներ (Մարտիրոսյան 1969, 23, 25, նկ. 14; Արեշյան, Սիմոնյան 1976, 287; Արեշյան 1985, 13): Էթիունյան թաղման համալիրներին բնորոշ ուղղանկյուն և եռանկյուն պրիզմայաձև, մի քանի մետր բարձրությամբ մենաքարեր են փատագրվել Աղթամիրի (Քալանթարյան, Մելքոնյան 2005, 55) ու Զորաքարերի դամբարանադաշտերում:

Ուրարտական մշակույթին բնորոշ են վերին մասում կորացող, ուղղանկյուն պրիզմայաձև հուշակոթողները (König 1957, 250–260, Taf. 119–121), որոնք, ակնհայտորեն, ստորին սուր ծայրով ամրացվում էին իրենց պատվանդանին (Ղափանցյան 1940, 142): Ուրարտական բազալտե հուշակոթող է գտնվել Էջմիածնի Մայր տաճարի արևելյան աբսիդում՝ բեմի տակ (նկ. 3): Գ.Ա. Տիրացյանը հիշյալ գտածոն համադրում է Զվարթնոցի և Ոսկեբլուրի (Ճմին/Ալթընթեփե) նմանատիպ հուշակոթողներին (Тирацян 1977, 84), որոնք ուրարտական մշակույթի արգասիք են (Özgüç 1969, 70–74, fig. 29–33, pl. XXVI, XXVII): Քննարկվող տիպին է պատկանում նաև Քելիշինի արձանագրակոթողը (Salvini 1985, 78), իսկ Թոփրակ կալեում գտնված մի կնքադրոշմ պատկերում է համանման երեք կոթողների առջև կատարվող ծիսական արարողությունը (Пиотровский 1959, 228, рис. 73; Հովհաննիսյան 1996, 174): Նման տիպի մի շարք կոթողներ տեղ են գտել Վանի թանգարանի բակում: Տվյալներ չկան, որ այս կոթողները վերաբերում են թաղման ծեսին, բայց չի բացառվում, որ դրանք եղել են այնպիսի սինկրետիկ բնույթի ուղենիշներ, որոնք, ի թիվս այլոց, կարող էին առնչվել նաև մահվան գաղափարին (ինչպես, օրինակ, խաչքարերը):

Կիմերական թաղման համալիրի բուն բաղադրիչներից է ինքնատիպ հուշակոթողը: Կիմերական հուշակոթողները տարածված են Արևելյան Եվրոպայի տափաստանային գոտում՝ հատկապես՝ մերձսևծովյան–նախակովկասյան տափաստաններում: Դրանք առկա են նաև Հարավային Կովկասում և Փոքր Ասիայում: Կիմերական կոթողները պատկանում են ոչ մարդակերպ (մասնավորապես՝ ֆալոիդ) տիպին (այս թեզը, մեր կարծիքով, հետագա լրացման կարիք ունի: Հայկական լեռնաշխարհում (և ոչ միայն) դրանք կարող են ձգված-սեղանաձև տեսք ունենալ և ինչ-որ կերպ դիմագծեր արտահայտել: Նման մի կուռք (հավանաբար՝ դամբանային հուշակոթող) հայտնաբերվել է Ջրափիում. տե՛ս Եգանյան 2013, 78-79, նկ. 207), որոնց վրա մարդու դեմքի առանձին մանրամասների պատկերված լինելը չի բացառվում: Եվրոպական տարածաշրջանում այս տիպի հուշայուների հայտնվելը վերագրվում է մ.թ.ա. VIII դարի կեսին – երրորդ քառորդին (Ольховский 2005, 5, 93): Այն քարե սյուն է, որի վրա պատ-

կերված է սրակալ–գոտի, որից կախված են դաշույնը կամ սուրը, աղեղը կամ կապարճը, սրոցաքարը: Հուշասյան մակերևույթին կարող են տեղ գտնել նաև մանյակների, օղերի, սեպերի պատկերներ (Мелюкова 1989, 16, таб. 1, 12, 13): Պատկերագրության մեջ ննջեցյալի անձնական իրերից հանդիպում են նաև ճակատակալ, պերճանքի այլ առարկաներ, դանակ, մարտական կացին, վահան և այլն (Ольховский 2005, 31–32): Կոթողի դիմային մասում հորիզոնական գծով կարող է պատկերված լինել գոտին, որից թեքությամբ ցած են իջնում իրար միացող երկու ուղիղների հատվածներ (դաշու՞յն) ու դրանց հատող գծի ևս մեկ հատված (պատյա՞ն): Կիմերական հուշակոթողը հիմքից դեպի գագաթը աստիճանաբար նեղանում է, իսկ թեք կտրված գագաթի դիմային կողը միշտ բարձր է թիկունքի կողից: Հուշակոթողների վերին մասն ավելի մանրակրկիտ է մշակված, իսկ հիմքի հատվածը, որը կազմում է բարձրության 1/4 կամ 1/3 մասը՝ ավելի կոպիտ (Ольховский 2005, 54): Կիմերական քարե հուշակոթողներից մեկի պահպանված բարձրությունը մոտավորապես 0,9 մ է: Ստորին կոպտատաշ հատվածն ակնհայտորեն նախատեսված է եղել լիցքի մեջ ամրացվելու համար: Միջին մասում պատկերված է գոտին, որին ամրացված է դաշույնը, գոտու վրա պատկերված է աղեղը՝ աղեղնամանի մեջ: Գոտուն ամրացված է նաև մարտական կացինը՝ կոթը դեպի ցած, գոտուց կախված է սրոցաքարը (Махортых 2008, 93, 538, рис. 153,$_7$; Ольховский 2005, 38, ил. 27,$_1$):

Արթիկի շրջանի Սարատակ գյուղի տարածքում հայտնաբերված ուղղանկյուն հատակագծով դամբարանի հյուսիսային կողմում գտնվել է 0,7 մ բարձրությամբ հատած կոնաձև (ֆալոի՞դ – Գ.Թ.) հուշակոթող: Նմանատիպ կոթող է գտնվել նաև քարարկղի հարավարևմտյան անկյան պեղումներով: Եթե ճիշտ է Սարատակի հեծյալ ռազմիկի հիշյալ դամբանի պատկանելության վերաբերյալ մեր ենթադրությունը, ապա հատած կոնաձև այս երկու հուշակոթողները հարկ է վերագրել կիմերական մշակույթին: Կոպտատաշ, բազալտե հուշակոթող է հայտնաբերվել Ազատանի N 3 կատակոմբի մուտքի դիմաց: Սարապատի N 3 դամբարանի ծածկասալերից վեր գտնվել է տուֆից կերտված կուռք, իսկ նույն դամբանադաշտի N 8 սալարկղի ծածկասալերի վրայից հայտնաբերվել է տուֆե մարդակերպ արձան:

Արթիկի N 223 կատակոմբի կենտրոնական հատվածում հայտնաբերվել է կարմիր տուֆից կերտված ֆալոս (Хачатрян 1975, 149): Ֆալաձև կոթողները, ինչպես ասվեց, ի թիվս այլոց, բնորոշ են կիմերական մշակույթին: Ենթադրվում է, որ կիմերական ֆալոիդ հուշասյուները խորհրդանշում էին մարդու մարմինը, մինչդեռ սկյութական մարդակերպ կոթողները, իրենց հերթին, խորհրդանշում էին ֆալը/սյունը (Ольховский 2005, 253): Ֆալաձև կոթողին վերագրվում էր ննջեցյալին չար ոգիներից զերծ պահելու հատկություն (Լալայան 1931, 201):

Երկաթի լայն տարածման դարաշրջանում Հայաստանի որոշ դամբանադաշտերում ի հայտ են գալիս մարդակերպ քարե կոթողներ: Այդ տիպի տուֆե մարդահասակ մահարձան է գտնվել (նկ. 4) Լոռի բերդի N 63 դամբարանի թաղման 2–րդ սրահում (Դեվեջյան 1991, 40–41; Dévédjian 1996, 127; Devedjyan

2009, 146, 150–151, fig. 1,1, tab. V): Այս մահարձանը, որն ըստ Ս. Դեվեջյանի, Հայաստանի մ.թ.ա. I հազարամյակին բնորոշ քանդակագործության նմուշներից է, «համեմատվում է նաև ուշ ուրարտական և սկյութական (մ.թ.ա. VI–IV դդ.) մարդակերպ արձանների հետ, թվագրվում է մ.թ.ա. VII–IV դարերով» (Դեվեջյան 1996, 22): Ենթադրվում է, որ Շավարշավանում (Есаян 1976, 222, 229, рис. 146,1) և Հայկաջրում (նախկին Սոֆուլու, Արցախ) (Պետրոսյան և այլք 2008, 189) հայտնաբերված մարդակերպ քարե կուռքերը սկզբնապես կանգնեցված են եղել դամբարանների վրա: Սկյութական համարվող նման մահարձաններ են հայտնի Վրաստանում՝ Իորի/Կամբեճ գետի ավազանում (Дашевская, Лордкипанидзе 1995, 100, рис. 1; Mehnert 2008, 88–89, 137, Taf. 95,12,13; Tsetskhladze 2011, 109–110, fig. 7), Հյուսիսային Կովկասում (Ильинская, Тереножкин 1983, 76, рис. 1–4), Ղրիմում (Ольховский, Храпунов 1990, 54), Սև ծովի հյուսիսամերձ տարածքներում և այլուր (Бокий, Ольховский 1994, 157–160, рис. 4; Власова 2000, 51–52, рис. 1, 2): Ըստ որում, Հայաստանում հայտնաբերված մարդակերպ (սկյութական տիպի) մահարձանների պատկերագրությունում եղջերագավաթի բացակայությունը կարող է հուշել, որ դրանք, հավանաբար, կերտվել են նախքան մ.թ.ա. VI դարի ավարտը (Власова 2000, 51, 54): Սկյութը, դատելով նրա մահարձանից, հագնված է ու զինված և, միաժամանակ, օժտված է ընդգծված սեռական հատկանիշով: Դրանից կարելի է եզրակացնել, որ պատկերված անձը ոչ միայն հերոս զորապետ է, այլև՝ նահապետ (Шульц 1967, 228): Սկյութական կոթողային քանդակագործությունը, ըստ երևույթին, կոչված էր մեծարելու հերոսացված նախնիներին (Артамонов 1961, 79–82; Петренко 1983, 47): Դրանք բնութագրվել են նաև որպես իշխանության և պատերազմի խորհրդանիշներ (Молев, Молева 2013, 15, 17): Ենթադրություն է արվել, որ Մեշքինշահիր քարարձանները, որոնց առնչությունը հյուսիսային տափաստանների քոչվորներին կարելի է հավանական համարել, զոհված ռազմիկների հուշակոթողներ են (Burney 1979, 156, pl. V): Ավելի վաղ ժամանակաշրջանով թվագրվող Հաքքարիի (հնագույն Նաիրի–Խուբուշկիայում) կոթողների I խմբի վերաբերյալ կարծիք է հայտնվել, որ դրանք ընդգծում էին կառավարչի կապը հին աստվածությունների հետ (Соколова 2014, 280, 287):

Հավելենք, որ Լոռի բերդի N 62 դամբարանում գտնվել է տուֆից կերտված ֆալոս: Օշականի N 59 դամբարանի թաղման սրահի պեղումներով հայտնաբերվել են երկու քարե ֆալոսներ: Բազմաթիվ տուֆե ֆալոսներ են հայտնաբերվել Մեծամորի դամբարանադաշտում: Ցանկացած հուշակոթող–մահարձան ընկալվում էր որպես երկինք տանող ճանապարհ: Այլ խոսքով, հուշակոթողը վերածննդի կամ անմահության գաղափարի կրողն էր (Թումանյան 2011, 223): Մարդ պատկերող որոշակի տիպի մահարձանի առկայությունը դամբանային համալիրի կազմում կարող է հուշել տվյալ դամբարանի առնչված լինելը սկյութական թաղման ծեսին (Раевский 1985, 78, 140–142): Սկյութական մարդակերպ արձանները տվյալ տարածքում սկյութական ցեղերի երբեմնի առկայությունը վկայող իրողություններ են (Ильинская 1983, 56):

Մարդակերպ կոթողները սկյութերի վաղ մշակույթի տարածքային և էթնիկական ցուցիչներն են (Алексеев 2003, 44): Պատահական չէ, որ սկյութական մշակույթի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններից մեկում ռուսերեն *скифское изваяние* (սկյութական արձան) բառակապակցությունը փոխարինված է անգլերեն *Scythian grave marker* (սկյութական դամբարանի ցուցիչ) արտահայտությամբ (Tsetskhladze 2011, 133): Հնագիտական աղբյուրների հիշյալ դասի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հայտնաբերել մարդկանց լոկալ ընդհանրությունների միջև եղած կապերը, պարզել նրանց սփռման տարածաշրջանները և այլն (Антонова 1977, 6; Ольховский, Евдокимов 1994, 5): Քարակերտ մարդակերպ կոթողները, որպես հնագիտական սկզբնաղբյուր և տվյալ հնագիտական համալիրի «անձնագրի բնօրինակ», հատկապես արժեքավոր են, քանի որ այդ ծավալուն և ծանր հուշակոթողները պատահականորեն չեն կարող շատ հեռվում հայտնվել իրենց տեղադրման սկզբնական վայրից:

Եզրակացություններ

Թաղման հուշակոթողները դամբանային կառույցների կարևոր բաղադրիչներից են, որոնք բնորոշ են Հայկական լեռնաշխարհի միջին բրոնզ-երկաթեդարյան մշակույթներին: Դրանց հետազոտությունը կարևոր նշանակություն ունի թաղման ծեսերի լուսաբանման համար: Հնագիտական աղբյուրների հիշյալ դասի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հայտնաբերել մարդկանց տարբեր համայնքների կամ ընդհանրությունների միջև եղած մշակութային կապերը, ուրվագծել դրանց սփռման գոտիները, պարզել մահվան մասին մեր նախնիների ունեցած պատկերացումները: Տարբեր դարաշրջանների կամ մշակույթների պատկանող դամբանային քարակոթողները իրարից տարբերվում են չափերով, ձևով, ոճով, մշակման տեխնիկայով, պատկերագրությամբ և այլ հատկանիշներով: Մահարձան–հուշակոթողները յուրահատուկ ցուցիչներ են, որոնց տիպաբանական ուսումնասիրություններն օգնում են պարզել ինչպես այդ քարակերտ կոթողների, այնպես էլ նման բաղադրիչով օժտված դամբանային կառույցների պատկանելությունը հնագիտական այս կամ այն մշակույթին:

Շնորհակալական

Հոդվածը գրելու ընթացքում տրամադրած օգտակար տեղեկությունների համար շնորհակալություն ենք հայտնում հնագետ Ա. Փիլիպոսյանին:

Գրականություն/References/Литература

1. Առաքելյան Բ.Ն., Մազմանյան Մ.Դ. (խմբ.) 1964, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
   Arakelyan B.N., Mazmanyan M.D. (eds) 1964, Overview of the History of Armenian Architecture, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
2. Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI–VI դարերում, Երևան, ԵՊՀ հրատ.:

Avetisyan H.G., Avetisyan P.S. 2006, The Culture of the Ararat Valley in the 11th–6th Centuries BC, Yerevan, Yerevan University Press (in Armenian).

3. Արեշյան Գ.Ե. 1981, Պահպանական պեղումներ Քանագեղի դամբարանադաշտում, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1979–1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 2–4:
Areshyan G.E. 1981, Conservative Excavations at the Kanagegh Burial-Ground, Arakelyan B.N. (ed.), Abstracts of the Scientific Session Dedicated to the Results of the 1979–1980 Field Archaeological Work in the Armenian SSR, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 2–4 (in Armenian).

4. Արեշյան Գ.Ե. 1985, Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1983–1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 13–15:
Areshyan G.E. 1985, A Decade of Systematic Excavations of the Shamiram Site Cluster, Arakelyan B.N. (ed.), Abstracts of the Scientific Session Dedicated to the Results of the 1983–1984 Field Archaeological Work in the Armenian SSR, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 13–15 (in Armenian).

5. Արեշյան Գ., Սիմոնյան Հ. 1976, ԵՊՀ-ի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի 1975 թ. կատարած հնագիտական աշխատանքները, Բանբեր Երևանի համալսարանի, N 1, 284–288:
Areshyan G., Simonyan H. 1976, The Archaeological Work, Completed at the Problematic Laboratory of Armenian Studies in 1975, Journal of Yerevan University, N 1, 284–288 (in Armenian).

6. Բաղրամյան Ա. 1988, Գոգարանի II դամբանաբլուրը, Խառատյան Զ.Վ., Պետրոսյան Հ.Լ. (խմբ.), Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանս, Զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ գիտական ինֆորմացիայի կենտրոնի և ֆունդամենտալ գրադարանի ռոտոպրինտի տեղամաս, 11–12:
Baghramyan A. 1988, Barrow II of Gogaran, Kharatyan Z.V., Petrosyan H.L. (eds), Issues of Studying Armenian Folk Culture, VIII Conference of Young Scientists, Abstracts, Yerevan, Rotoprint Site of the Center for Scientific Information and the Fundamental Library of the Academy of Sciences of the Armenian SSR, 11–12 (in Armenian).

7. Դեվեջյան Ս.Հ. 1991, Լոռի բերդի 1989–1990 թթ. պեղումների արդյունքները, Տիրացյան Գ.Ա. (խմբ.), Հայաստանի Հանրապետությունում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 38–41:
Devedjyan S.H. 1991, Results of the 1989–1990 Excavation at Lori-Berd, Tiratsyan G.A. (ed.), Archaeological Field-Work in the Republic of Armenia in the Years 1989–1990, Abstracts of Papers, Publishing House of the Armenian Academy, 38–41 (in Armenian).

8. Դեվեջյան Ս. 1996, Քարե պաշտամունքային արձանները Լոռի բերդի դամբարանադաշտում, Քալանթարյան Ա.Ա., Հարությունյան Ս.Բ. (խմբ.), Հայաստանի Հանրապետությունում 1993–1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին

նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզեր, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 21–22:
Devedjyan S. 1996, Stone Cult Statues in the Burial-Ground of Lori-Berd, Kalantaryan A.A., Harutyunyan S.B. (eds), 10th Scientific Session Dedicated to the Results of Archaeological Research in the Republic of Armenia in 1993–1995, Abstracts of Papers, Yerevan, Institute of Archaeology and Ethnography of NAS RA Press, 21–22 (in Armenian).

9. Դեվեջյան Ս. 2006, Լոռի բերդ II (միջին բրոնզ), Երևան, «Գիտություն»:
Devedjyan S. 2006, Lori Berd II (Middle Bronze Age), Yerevan, Gitutyun (in Armenian).

10. Եգանյան Լ. (խմբ.) 2013, Շիրակը մշակույթի օրրան, Երևան, «Տիգրան Մեծ»:
Yeganyan L. (ed.) 2013, Shirak as a Cultural Cradle, Yerevan, Tigran Mets (in Armenian).

11. Թումանյան Գ. 2003, Հայաստանի ուշբրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 166–185:
Tumanyan G. 2003, The Structure of the Late Bronze Age Tombs in Armenia, Historical-Philological Journal, N 1, 166–185 (in Armenian).

12. Թումանյան Գ. 2008, Աշտարակի Խոջաբաղերի դամբանաթումբը դամբանաբլրային մշակույթի համատեքստում, Պատմաբանասիրական հանդես, N 1, 187–199:
Tumanyan G. 2008, The Barrow in the Site of Khojabagher, Ashtarak Town in the Context of Kurgan Culture, Historical-Philological Journal, N 1, 187–199 (in Armenian).

13. Թումանյան Գ. 2011, Բրոնզեդարյան դամբարանները մահվան պատկերացումներում և դրանց կառուցվածքի առանձնահատկությունները, Պատմաբանասիրական հանդես, N 2, 212–225:
Tumanyan G. 2011, Bronze Age Tombs in the Concepts of Death and the Peculiarities of their Structure, Historical-Philological Journal, N 2, 212–225 (in Armenian).

14. Թումանյան Գ. 2015, Վիշապաքարերի պաշտամունքային-կիրառական գործառույթները, Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», 99–120:
Tumanyan G. 2015, The Cult and Practical Functions of Vishap Stones, Petrosyan A., Bobokhyan A. (eds), The Vishap Stone Stelae, Yerevan, Gitutyun, 99–120 (in Armenian).

15. Լալայան Ե. 1928, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում, Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, N 3, 82–118:
Lalayan Y. 1928, Development of Burials and Graves in Armenia, Bulletin of the Institute of Science and Art of the Armenian SSR, N 3, 82–118 (in Armenian).

16. Լալայան Ե. 1931, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, Մելքոնյան ֆոնդի հրատ.:
Lalayan Y. 1931, Tomb Excavations in Soviet Armenia, Yerevan, Melkonyan Foundation Press (in Armenian).

17. Խանզադյան Է. 2005, Լճաշենի վիշապը, Քալանթարյան Ա.Ա., Բադալյան Ռ.Ս., Ավետիսյան Պ.Ս. (խմբ.), Հին Հայաստանի մշակույթը, XIII, Երևան, «Մուղնի», 86–91:
Khanzadyan E. 2005, The Vishap Stele of Lchashen, Kalantaryan A.A., Badalyan R.S., Avetisyan P.S. (eds), The Culture of Ancient Armenia, XIII, Yerevan, Mughni, 86–91 (in Armenian).

18. Հովհաննիսյան Կ.Լ. 1996, Ուրարտական ճարտարապետությունը, Առաքելյան Բ.Ն. (խմբ.), Հայկական ճարտարապետության պատմություն (վեց հատորով), հ. 1, Երևան, «Գիտություն», 87–99:

Hovhannisyan K.L. 1996, Urartian Architecture, Arakelyan B.N. (ed.), History of Armenian Architecture (in Six Volumes), vol. 1, Yerevan, Gitutyun, 87–99 (in Armenian).

19. Ղափանցյան Գ. 1940, Ուրարտուի պատմությունը, Երևան, ԵՊՀ հրատ.:
Ghapantsyan G. 1940, History of Urartu, Yerevan, State University Press (in Armenian).

20. Մարտիրոսյան Հ.Ա. 1969, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Martirosyan H.A. 1969, Settlements and Burial-Grounds of the Late Bronze Age, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).

21. Մուրադյան Ֆ. 1988, Պեղումներ Ապարանի ջրամբարի ափին, Խառատյան Զ.Վ., Պետրոսյան Հ.Լ. (խմբ.), Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանս, Զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ գիտական ինֆորմացիայի կենտրոնի և ֆունդամենտալ գրադարանի ռոտոպրինտի տեղամաս, 55–56:
Muradyan F. 1988, Excavations on the Shore of the Aparan Reservoir, Kharatyan Z.V., Petrosyan H.L. (eds), Issues of Studying Armenian Folk Culture, VIII Conference of Young Scientists, Abstracts, Yerevan, Rotoprint Site of the Center for Scientific Information and the Fundamental Library of the Academy of Sciences of the Armenian SSR, 55–56 (in Armenian).

22. Պետրոսյան Հ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Հակոբյան Հ., Սաֆարյան Վ., Կիրակոսյան Լ. 2008, Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները, Ավետիսյան Պ.Ս., Քալանթարյան Ա.Ա., Բադալյան Ռ.Ս. (խմբ.), Հին Հայաստանի մշակույթը, XIV, Երևան, «Գիտություն», 187–199:
Petrosyan H., Khachatryan Zh., Piliposyan A., Hakobyan H., Safaryan V., Kirakosyan L. 2008, The First Results of Archaeological Research at Tigranakert of Artsakh and its Surroundings, Avetisyan P.S., Kalantaryan A.A., Badalyan R.S. (eds), The Culture of Ancient Armenia, XIV, Yerevan, Gitutyun, 187–199 (in Armenian).

23. Սիմոնյան Հ. 2006, Վերին նավեր, Գիրք Ա (1976–1990 թթ. պեղումների արդյունքները), Երևան, ԵՊՀ հրատ.:
Simonyan H. 2006, Verin Naver, Book A (1976–1990 Excavation Results), Yerevan, Yerevan University Press (in Armenian).

24. Սիմոնյան Հ. 2021, Ներքին նավերի N 1 «արքայական դամբարանը», «Հուշարձան», h. ԺԶ, 9–84:
Simonyan H. 2021, The "Royal Tomb" N 1 of Nerkin Naver, Hushardzan, vol. 16, 9–84 (in Armenian).

25. Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ. 2005, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990–2003 թթ. (հիմնական արդյունքները), Երևան, «Մուղնի»:
Kalantaryan A., Melkonyan H. 2005, Archaeological Works in Armenia in 1990–2003 (Main Results), Yerevan, Mughni (in Armenian).

26. Алексеев А.Ю. 2003, Хронография европейской Скифии VII–IV веков до н.э., С.–Петербург, изд. Гос. Эрмитажа.
Alekseev A.Yu. 2003, The Chronography of European Scythia (7th–4th Centuries BC), St. Petersburg, The Hermitage Publishing House (in Russian).

27. Антонова Е.В. 1977, Антропоморфная скульптура древних земледельцев Передней и Средней Азии, Москва, «Наука».

Antonova E.V. 1977, Anthropomorphous Sculpture of Ancient Farmers of Western and Central Asia, Moscow, Nauka (in Russian).

28. Артамонов М.И. 1961, Антропоморфные божества в религии скифов, Археологический сборник Государственного Эрмитажа, вып. 2, Ленинград, изд. Гос. Эрмитажа, 57–87.
Artamonov M.I. 1961, Anthropomorphous Deities in the Scythian Religion, Archaeological Collection of the State Hermitage Museum, Iss. 2, Leningrad, State Hermitage Press, 57–87 (in Russian).

29. Бокий Н.М., Ольховский В.С. 1994, Раннескифский курган на днепровском Правобережье, Российская археология, N 2, 151–163.
Boky N.M., Ol'khovsky V.S. 1994, An Early Scythian Kurgan on the Right Bank of Dnieper, Rossiyskaya Arkheologiya, N 2, 151–163 (in Russian).

30. Власова Е.В. 2000, Скифский рог, Соловьев С.Л. (ред.), Античное Причерноморье. Сборник статей по классической археологии, С.–Петербург, изд. Гос. Эрмитажа, 46–67.
Vlasova E.V. 2000, The Scythian Horn, Solovev S.L. (ed.), The Ancient Black Sea Region. Collection of Articles on Classical Archaeology, St. Petersburg, The Hermitage Publishing House, 46–67 (in Russian).

31. Дашевская О., Лордкипанидзе Г. 1995, Скифское изваяние из Восточной Грузии, Историко-археологический альманах (Армавирского краеведческого музея), вып. 1, Армавир, Москва, изд. Армавирского краеведческого музея, 99–101.
Dashevskaya O., Lordkipanidze G. 1995, A Scythian Sculpture from Eastern Georgia, Historical-Archaeological Almanac (Armavir Museum of Local Lore), Issue 1, Armavir, Moscow, Armavir Museum of Local Lore Press, 99–101 (in Russian).

32. Есаян С.А. 1976, Древняя культура племен северо–восточной Армении (III–I тыс. до н.э.), Ереван, изд. АН АрмССР.
Yesayan S.A. 1976, The Ancient Culture of the Tribes of Northeastern Armenia (3rd–1st Millennia BC), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Russian).

33. Ильинская В.А. 1983, Скифы и Кавказ (тезисы доклада), Археологический сборник Государственного Эрмитажа, вып. 23, Ленинград, изд. Гос. Эрмитажа, 55–56.
Il'inskaya V.A. 1983, Scythians and the Caucasus (Abstract), Archaeological Collection of the State Hermitage Museum, Iss. 23, Leningrad, State Hermitage Press, 55–56 (in Russian).

34. Ильинская В.А., Тереножкин А.И. 1983, Скифия VII–IV вв. до н.э., Киев, «Наукова думка».
Il'inskaya V.A., Terenozhkin A.I. 1983, Scythia of the 7th–4th Centuries BC, Kiev, Naukova Dumka (in Russian).

35. Махортых С.В. 2008, Культура и история киммерийцев Северного Причерноморья, Диссертация на соиск. уч. степени доктора ист. наук, Киев, «Институт археологии НАНУ».
Makhortykh S.V. 2008, Culture and History of the Cimmerians in the Pontic Steppes, Thesis for Doctor of Historical Sciences Degree, Kiev, Institute of Archaeology NASU (in Russian).

36. Мелюкова А.И. 1989, Предскифский период в степях Северного Причерноморья, Степи европейской части СССР в скифо–сарматское время, Археология СССР, Москва, «Наука», 10–16.
Melyukova A.I. 1989, The Pre–Scythian Period in the Steppes of the Northern Black Sea Region, The Steppes of the European Part of the USSR in the Scythian–Sarmatian Period, Archaeology of USSR, Moscow, Nauka, 10–16 (in Russian).

37. Молев Е.А., Молева Н.В. 2013, Скифские антропоморфные изваяния Северного Причерноморья: эмблемы власти и войны, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, N 4, 15–21.
Molev E.A., Moleva N.V. 2013, Scythian Anthropomorphous Sculptures of the Northern Black Sea Region: Emblems of Power and War, Bulletin of the Nizhny Novgorod Lobachevsky University, N 4, 15–21 (in Russian).

38. Оганесян В.Э. 1993, Раскопки Карашамбского могильника в 1987 г., Тирацян Г.А., Калантарян А.А., Арешян Г.Е. (ред.), Археологические работы на новостройках Армении, I, Ереван, изд. АН Армении, 26–36.
Oganesyan V.E. 1993, Excavations of the Karashamb Burial-Ground in 1987, Tiratsyan G.A., Kalantaryan A.A., Areshyan G.E. (eds), Archaeological Work on New Buildings in Armenia, Yerevan, Publishing House of the Armenian Academy of Sciences, 26–36 (in Russian).

39. Ольховский В.С 2005, Монументальная скульптура населения западной части евразийских степей эпохи раннего железа, Москва, изд. Института археологии РАН.
Ol'khovsky V.S. 2005, Monumental Sculpture of the Population of the Western Part of the Eurasian Steppes of the Early Iron Age, Moscow, Institute Archaeology RAS Press (in Russian).

40. Ольховский В.С., Евдокимов Г.Л. 1994, Скифские изваяния VII–III вв. до н.э., Москва, «Наука».
Ol'khovsky V.S., Evdokimov G.L. 1994, Scythian Sculptures of the 7th–3rd Centuries BC, Moscow, Nauka (in Russian).

41. Ольховский В.С., Храпунов И.Н. 1990, Крымская Скифия, Симферополь, «Таврия».
Ol'khovsky V.S., Khrapunov I.N. 1990, Crimean Scythia, Simferopol', Tavria (in Russian).

42. Петренко В.Г. 1983, Скифская культура на Северном Кавказе, Археологический сборник Государственного Эрмитажа, вып. 23, Ленинград, изд. Гос. Эрмитажа, 43–48.
Petrenko V.G. 1983, Scythian Culture in the North Caucasus, Archaeological Collection of the State Hermitage Museum, Iss. 23, Leningrad, State Hermitage Press, 43–48 (in Russian).

43. Пиотровский Б.Б. 1959, Ванское царство (Урарту), Москва, изд. Восточной литературы.
Piotrovsky B.B. 1959, Van Kingdom (Urartu), Moscow, Oriental Literature Press (in Russian).

44. Раевский Д.С. 1985, Модель мира скифской культуры, Москва, «Наука».
Raevsky D.S. 1985, A Model of the World of Scythian Culture, Moscow, Nauka (in Russian).

45. Соколова Л.А. 2014, Антропоморфные стелы Хаккари (Юго–Восточная Турция) в историческом контексте, Археология древних обществ Евразии: хронология, культурогенез, религиозные воззрения, Труды Института истории материальной культуры РАН, т. XLII, С.–Петербург, «Арт–Экспресс», 271–295.
Sokolova L.A. 2014, Anthropomorphous Stelae from Hakkari (Southeastern Turkey) in a Historical Context, Archaeology of the Ancient Societies of Eurasia: Chronology, Cultural Genesis, Religious Views, Proceedings of the Institute of the History of Material Culture of the RAS, vol. XLII, St. Petersburg, Art–Xpress, 271–295 (in Russian).

46. Спицын А.А. 1904, Археологические исследования Э.А. Рёслера в Елисаветпольской губернии в 1901 году, Известия Императорской археологической комиссии, вып. 12, С.–Петербург, 36–60.

Spitsyn A.A. 1904, Archaeological Research by E.A. Roesler in the Elisavetpol Province in 1901, Proceedings of the Imperial Archaeological Commission, Issue 12, St. Petersburg, 36–60 (in Russian).

47. Тирацян Г.А. 1977, К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валаршапата, Историко-филологический журнал, N 2, 81–98.
Tiratsyan G.A. 1977, On the Question of the Urban Planning Structure and Topography of Ancient Valarshapat, Historical-Philological Journal, N 2, 81–98 (in Russian).

48. Хачатрян Т.С. 1975, Древняя культура Ширака, Ереван, изд. Ереванского университета.
Khachatryan T.S. 1975, Ancient Culture of Shirak, Yerevan, Yerevan University Press (in Russian).

49. Шульц П.Н. 1967, Скифские изваяния Причерноморья, Блаватская Т. и др. (ред.), Античное общество, Труды конференции по изучению проблем античности, Москва, «Наука», 225–237.
Shul'ts P.N. 1967, Scythian Sculptures from Black Sea Region, Blavatskaya T. et al. (eds), The Ancient Society, Proceedings of the Conference on the Study of Problems of Antiquity, Moscow, Nauka, 225–237 (in Russian).

50. Burney C. 1979, Meshkinshahr Survey, Iran, XVII, 155–156.

51. Dévédjian S. 1996, La Nécropole et la Forteresse de Lori-Berd, Santrot J. (réd.), Arménie. Trésors de l'Arménie ancienne, Paris, "Somogy Editions d'Art", 126–128.

52. Devedjyan S. 2009, Stone Stelae in the Burial Ground of Lori Berd, Aramazd, vol. IV, Issue 2, 146–153.

53. König F.W. 1957, Handbuch der chaldischen Inschriften, T. II, Graz, Selbstverlage des Herausgebers.

54. Mehnert G. 2008, Skythika in Transkaukasien. Reiternomadische Sachkultur im archäologischen Fundkontext, Wiesbaden, Dr. Ludwig Reichert Verlag.

55. Özgüç T. 1969, Altintepe, II. Tombs, Storehouse and Ivories, Türk Tarih Kurumu Yayinlarindan, V Seri, N 27, Ankara.

56. Salvini M. 1985, La Civiltà dell'Urartu, Le Scienze: Edizione Italiana di Scientific American, Num. 204, An. XVIII, vol. XXXV, Milano, 70–85.

57. Tsetskhladze G. 2011, The Scythians: Three Essays, Tsetskhladze G. (ed.), The Black Sea, Greece, Anatolia and Europe in the First Millennium BC, Leuven–Paris–Walpole, Peeters, 95–139.

58. Tumanyan G. 2010, The Cimmerian–Scythian Sepulchres of the Armenian Highland, Aramazd, vol. V, Issue 2, 188–200.

59. Tumanyan G.S. 2017, Cimmerian and Scythian Funerary Rituals in the South Caucasus, Near Eastern Archaeology, 80/3, 196–201.